

268

11198



Լ. ԲԵՐԻԱ

ԿԱՎՈՒԹՅԱՆ
ՅԵՂ
ԲԱՐՔԱՎԻՏ
ՀԱՄԱՐՆԵՐ

338(47.924)
P-55

338 (47.924)

F-55

ՊՐՈՒՆՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆԻՔ.

L. Բ Ե Ր Ի Ա

FB 2001

1007
3702P

ՎՐԻՊՈՎՆԵՐ

Եջ	տող	տպագած է	պիտի լինի
5	15 ներքեից	դուս մղել	գուրս մղել
36	13 գերեից	խոջով	խոսխոս
37	1 ներքեից	դրություն է	դիրքն է
41	21 վեր.	այլ	այլ
45	8 վեր.	հառանայու	հեռանայու
49	1 ներք	սարքավում	սարքավում
49	2 ներք	վարչությունը	վարչությունը
50	4 վեր.	անել	անել
51	9 ներք.	նշանառում	նշանակում
52	9 ներք.	է	է
55	14 վեր	արդ	արդ
62	4 ներք.	հարբերակուն	հարբերակուն
65	9 ներք.	առնել	առնել

2010


Մ. Ա. Մաշկինսկի
Հ. ՈՐՈՇՐԱՏ
ՄԱՍՆԻՍՏՐԱՆԻ ԱՆՎՈՐՈՒՄ - 1933

Խմբագրեցին՝ Հ. ԵՂՁԻԲԵԿՅԱՆ, Հ. ԲԱՐԴՅԱՆ
Սրբագիր և տեխ. խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ



89340-աւ

840-91



ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԱՆԻՐՑՅԵՐԿՈՄԻ ԲԱՐՏՈՒՂԱՐ
ԸՆԿ. Լ. ԲՆՐԱ

**ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԿՎՀ
ՀՈՒՆՎԱՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՅԵՎ ԱՒԻՐԵՋՆԵԻ ԿՈՒՍԱԿՑՈՎԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

(Բազմի կուսակառուցի 1933 թվի հունվարի
26-ի ժողովում արած զեկուցումը)

Համկոմկուսի (բ) կենտկոմի և ԿՎՀ հունվարյան մի-
ացյալ պլենումը մեր կուսակցության պատմության մեջ
մեծ տեղ կզբաղի:

Հնգամյակի չորս տարում կատարումը համաշխարհա-
յին — պատմական նշանակություն ունի:

Ընկ. Ստալինն ըր ղեկուցման մեջ ցայտուն կերպով
ընդգծել և հնգամյակի միջազգային նշանակությունը:

Նա ասել է.

«Հնգամյակի հաջողությունները մտրելիզացիայի
յեն յենթարկում բոլոր յերկրների բանվոր դասակար-
գի հեղափոխական ուժերը կապիտալիզմի դեմ: Այդ
անվիճելի փաստ է: Կասկած չի կարող լինել, վոր
հնգամյակի միջազգային հեղափոխական նշանակու-
թյունն իրոք անչափ է»:

Միմիայն հատատուն լենինյան գիծը՝ յերկրի ինդուս-
տրացման արագացրած տեմպերի վերաբերմամբ, — վոր
անչեղորեն տարել է կենտրոնական կոմիտեն՝ մեր առաջ
նորդ և ուսուցիչ, Լենինի մեծագույն ղեկավար ընկ. Ստա



լինի գլխավորութեամբ, — սպառնովել և մեզ համար այդ պատմական հաղթանակները: Այդ ուղիով կուսակցութեամբ հաստատուան սարել և ընկ. Ստալինը, վորի անմիջական ղեկավարութեամբ նշվել ու մշակվել են առաջին հրեզամակի հիմնական ուղղութեանները: Մեծ աշխատանքներ ի այդ պլանը ընկ. Ստալինը նշել և լենինյան խորիմատութեամբ, պլանի կատարման համար միջոց պայքարն ընթացել և նրա անմիջական ղեկավարութեամբ:

Առաջին հնգամակի շորս տարում կատարելը հանդիսանում և իրականացում է ենինի այն պատգամների, վորոնք վերաբերվում են մեր յերկրի ինդուստրացմանը և գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցմանը:

«Առաջին հնգամակի հանրազումարի մասին» ընկ. Ստալինի տված ղեկուցումը մեր եպոխտի մեծագույն փաստաթուղթն և հանդիսանում: «Գյուղում տարվող աշխատանքի մասին» նրա ճառը բուլշևիկյան ինքնաքննադատութեան որինակ և հանգիսանում, կուսակցութեանը և բանվոր դասակարգին զինում և նոր պայմաններն ու նոր խնդիրներն լենինյան ըմբռնումով:

Այդ ճառը, գյուղական տնտեսութեան հետադա սոցիալիստական վերակառուցման վերաբերմամբ մեր ամբողջ աշխատանքի ծրագիրն և հանդիսանում: Նա պետք և զբր վի գյուղում տարվող մեր ամբողջ աշխատանքի հիմքում և գտնանա յուրաքանչյուր կոլխոզնիկի, սովխոզի յուրաքանչյուր բանվորի սեփականութեանը:

Ընկ. Ստալինը կոչ և արել կուսակցութեանը՝ բարձրացնելու հեղափոխական գզաստութեանը:

Նա ասել է. —

«Հեղափոխական գզաստութեանը հանգիսանում և հենց այն հասկութեանը, վոր այժմ առանձնապես անհրաժեշտ է բուլշևիկներին»:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԿՎՀ հունվարյան պլանումի վորոշումները պահանջում են, վոր յուրաքանչյուր կոմունիստ, յուրաքանչյուր կոմյերիտական զինվի տրվյալ ետապի դասակարգային պայքարի առանձնահատկութեանների պարզ ու վորոշակի ըմբռնումով:

Պլենումը ավել և առաջին հնգամակի հանրազումարը:

Ի՞նչ հիմնական խնդիրներ և ունեցել առաջին հնգամակը:

Ընկ. Ստալինը Կենտկոմի և ԿՎՀ պլենումում արած իր ղեկուցման մեջ այսպես և վորոշել այդ խնդիրները. —

«Հնգամակի հիմնական խնդիրը կայանում էր նրբանում, վորպեսզի մեր յերկիրն իր հետամնաց, յերբեմն միջնադարյան տեխնիկայով ղրվեր նոր, ժամանակակից տեխնիկայի սեյսերի վրա:

Հնգամակի հիմնական խնդիրը կայանում էր նրանում, վորպեսզի Խորհրդային Միութեանն ազրարային, վոչ ուժեղ կապիտալիստական յերկրներին զմահաճուլքներից կախված յերկրից՝ վերածել ինդուստրիալ և հզոր, կատարելապես ինքնուրույն ու համաշխարհային կապիտալիզմի զմահաճուլքներից անկախ յերկիր:

Հնգամակի հիմնական խնդիրը կայանում էր նրբանում, վորպեսզի Խորհրդային Միութեանն ինդուստրիալ յերկրի վերածելով դուս մղել մինչև վերջ կապիտալիստական տարբերը, ընդլայնվի տնտեսութեան սոցիալիստական ձևերի Փրոնտը և տնտեսական բազա ստեղծվի Խորհրդային Միութեանում դասակարգերը վոչնչացնելու, սոցիալիստական հասարակութեան կառուցելու համար:

Հնգամակի հիմնական խնդիրը կայանում էր նրբանում, վորպեսզի մեր յերկրում ստեղծվի այնպիսի ինդուստրիա, վորն ընդունակ լինի վերազինելու և վերակազմակերպելու վոչ միայն արդյունաբերութեան ամբողջապես, այլ և տրանսպորտը, այլ և գյուղատնտեսութեանը՝ սոցիալիզմի բազայի վրա:

Հնգամակի հիմնական խնդիրը կայանում էր նրանում, վորպեսզի մանր և ցիբ ու ցան գյուղատնտեսութեանը փոխադրվի խոշոր կոլլեկտիվ տնտեսութեան

ուելսերի վրա, ապահովվի հենց զբանով սոցիալիզմի վերականգնման հնարավորութունը Սորհրդային Միութիւնում:

Վերջապես, հնգամյա պլանի ինդիքը կայանում էր նրանում, վորպէրդի յերկրում ստեղծվեն տեխնիկա կան և տնտեսական բոլոր անհրաժեշտ նախադրյալները, յերկրի պաշտպանունակութունն առավելագույն չափով բարձրացնելու համար»:

Ահա այն ինդիքները, վոր կուսակցութունը դրել էր առաջին հնգամյակում և վորոնք՝ շնորհիվ լենինյան կենտ կոմի ճիշտ ղեկավարութեան ու մասսաների ենտուղիազմի շտանոված վերելքի, սոցմըցման ու հարվածայնութեան աճման՝ հաջողութեամբ լուծվել են:

Դուք գիտեք, վորը հնգամյակը հիմնականում կատարված է չորս տարի յերեք ամսում:

Յեռ ձեր ուշադրութիւնը չեմ հոգնեցնի բաղմամբիվ թը վերով, այլ կրեքեմ միայն նրանցից հիմնականները:

Մենք ստեղծել ենք սև մետաղագործութիւն — յերկրի ինդուստրացման հիմքը, տրակտորային արդյունաբերութիւն, ավտոմոբիլային արդյունաբերութիւն, քիմիական արդյունաբերութիւն, ավիացիոն արդյունաբերութիւն, դաղդյաճաշինութեան արդյունաբերութիւն, ածխամետաղագործական նոր բազա յենք ստեղծել Արևելքում:

Հարյուրավոր նոր ձեռնարկներ պատել են Սորհրդային յերկրի տերիտորիան:

Արդյունաբերութեան ընդհանուր արտադրանքը 1913 թվի համեմատութեամբ աճել է 334 %:

Ինդուստրացման այս հաջողութիւնների հետեւանքով մեր յերկիրը դարձել է ինդուստրիալ ու հզոր յերկիր. միանգամայն ինքնուրույն և համաշխարհային կապիտալիզմի քմահաճույքներից անկախ, այն ժամանակ, յերբ կապիտալիստական աշխարհը բռնված է ամենադաժան ճգնաժամով:

Մենք տրակտորների արտադրութեան նկատմամբ աշխարհիս մեջ առաջին տեղն ենք անցել, դյուրատնտեսական մեքենաշինութեան նկատմամբ — աշխարհի առաջին տեղը,

կոմբայնների արտադրութեան նկատմամբ — աշխարհի մեջ առաջին տեղը, ընդհանուր մեքենաշինութեան նկատմամբ — Յեվրոպայում առաջին տեղը և աշխարհի մեջ յերկրորդը, չուգունի նկատմամբ — Յեվրոպայում առաջին և աշխարհում յերկրորդ տեղը, էլեքտրոններգիայի վերաբերմամբ — աշխարհում յերկրորդ տեղը, նալթի նկատմամբ — Յեվրոպայում առաջին և աշխարհում յերկրորդ տեղը, տորֆի նկատմամբ — աշխարհում առաջին, ածխի ու քիմիայի նկատմամբ — աշխարհում չորրորդ տեղը:

Ընկ. Սերգո Որշոնիկիձեմ կենտկոմի պլենումում իր յելույթի ժամանակ հայտարարեց, թե աշխարհում չկա այնպիսի մի մեքենա, վոր մենք չկարողանայինք պատրաստել. Սորհ. Միութիւնում չկա այնպիսի մի ձեռնարկ, Փաբրիկա, դործարան, հիդրոկայան, վոր մենք չկարողանանք նախագծել: Ընկ. Որշոնիկիձեմի այս հայտարարութիւնն առանձին վոդեվորութեամբ ընդունեց կենտկոմի պլենումը:

Այս բոլորի հետեւանքը յեղավ այն, վոր կապիտալիստական տարրերը վերջնականապես ու անդառնալի կերպով դուրս են մղված արդյունաբերութիւնից, իսկ սոցիալիստական արդյունաբերութիւնը Սորհ. Միութիւնում դարձել է ինդուստրիայի միակ ձեռք և Սորհ. Միութիւնը ազրարային յերկրից վերածվեց ինդուստրիալ յերկրի:

Յեթե 1928 թվին արդյունաբերական արտադրանքը կազմում էր 48 տոկոս, իսկ դյուրատնտեսութիւնը — 52 տոկոս, ապա 1932 թվին արդյունաբերութիւնը — 70 տոկոս, դյուրական տնտեսութիւնը — 30 տոկոս:

Մենք հնգամյա պլանը չորս տարում կատարեցինք ամբողջ արդյունաբերական արտադրանքի վերաբերմամբ 93,7 տոկոս, իսկ ծանր արդյունաբերութեան նկատմամբ — 108 տոկոս:

Մենք ամբողջ արդյունաբերութեան նկատմամբ հնգամյա պլանը լրիվ կկատարեյինք, բայց բարդութիւնները Հեռավոր Արևելքում, ինչպես և կապիտալիստական հարևանների կողմից չհարձակվելու պայմանագիր ստորագրելուց հրաժարվելը պարտաւորեցին մեր մի շարք գործարանները վոխադրել պաշտպանութեան ժամանակակեց ղենքերի արտադրութեանը:

«Վոչ մի կասկած չի կարող լինել, — ասել է ընկ. Ստալինը կենտկոմի պլենումում, — վոր առանց այդ միջանկյալ հանդամանքի մենք վոչ միայն կկատարենք, այլ անպատճառ կզերակատարենք հնդամյա պըլանի թվական մասը»:

Մտաայնորապես վեց տոկոս թեթևակատարումը գեաց յերկրի պաշտպանության ամբապնդմանը և հետևանքն յերազմայն, վոր թույլ է ինքնապաշտպանության համար չնախապատրաստված յերկրից մենք դարձանք պաշտպանունակության տեսակետից հզոր յերկիր:

Ընկ. Վորշիլովը՝ մեր անհաղթ կարմիր բանակի ու կարմիր Ստալատորմի ղեկավարը՝ կենտկոմի պլենումում իր յեղույթի ժամանակ սրինակներ բերեց յերկրի պաշտպանության համար մեր լիովին պատրաստ լինելուն, վոր պաշտպանության համար անհրաժեշտ միջոցները՝ ավիացիան, տանկերը, թնդանոթները, քիմիան և այլն մենք այժմ ընդունակ ենք ինքներս արտադրել մատասյական մասշտաբով:

Այս բոլորը հնարավոր է դարձել ինդուստրացման քաղաքականության հաջողությունների շնորհիվ:

Իսկ հնդամյա պլանի կատարման հետևանքով մենք վոչ միայն վերածվեցինք ինդուստրիալ յերկրի, այլև մենք աշխարհի մեջ ամենախոշոր գյուղատնտեսության յերկիրը դարձանք:

Լենինը շատ անգամ մատնանշել է խոշոր կոլլեկտիվ գյուղական անտեսության անցնելու անհրաժեշտությունը: Լենինն ասել է.

«Յեթե մենք առաջվա պես նստենք մանր անտեսություններում, թեպետ և աղատ քաղաքացիներ ազատ հողում, մեզ միևնույն է անխուսափելի կորուստ է ըստպանում»:

Կուսակցությունը գյուղական անտեսության նկատմամբ հնդամյակը կազմելիս յերակետ ունեցել Լենինի այդ ցանկությունները և մեծ հաջողություններ է ձեռք բերել նրանց կատարման բնադավառում:

Յերեք տարվա մեջ կազմակերպված է 211,000 կոլտոկ և 5000 սովխոզ:

Չորս տարվա մեջ ցանքասյին տարածության աճումը հասել է 21 միլիոն հեկտարի:

Գյուղական անտեսությունների 60 տակսը կոլտոցներն են ներդրումը, ամբողջ տարածության 70 տակսը կոլտոցներն են ընդգրկել, դա նշանակում է հնդամյակի յետակի գերակատարում: Գյուղական անտեսության մեքենայացման ասպարեզում նույնպես մենք շատ առաջ ենք գնացել (1928 թվին գյուղատնտեսական գործիքներ ունեցինք 1.150 միլիոն ուրլու, իսկ չորս տարվա մեջ նորից առացվել է 1,600 միլիոնի):

Կազմակերպված է 2.446 ՄՏԿ:

Չորս չափով աճել է գյուղական անտեսության արանքային արտադրանքը: Կուլակությունը վորպես դասակարգ ջախջախված է թեև դեռ չվոչնչացված:

Ռոքհոլային իշխանության համար գյուղում անտեսական հնոտությունն բարդ յե դրված:

Յերկրի ինդուստրացման հաջողությունների հիման վըրա բարեկալիվում է աշխատավոր մասսաների նյութական դրությունը, աճում է նրանց կուլտուրական մակարդակը:

Առաջին հնդամյակի մեծագույն հաղթանակներից մեկը գործադրվել է վոչնչացումն է, վերացել է բանվորի անվրաստահությունը վաղվա նկատմամբ:

Մյուս հաղթությունն է հանդիսանում գրեթե գյուղական ամբողջ շրջավորության ընդգրկումը, գյուղացիության շերտավորման կասեցմամբ և հենց գրանով իսկ վոչնչացվել է աղքատությունն ու պառուպերիզմը գյուղում:

— Դա այնքիսի մի հսկա նվաճում է, — ասել է ընկ. Ստալինը, — վորի մասին բուրժուական վոչ մի պետություն չի կարող յերազել, վորքան էլ, թեկուզ «գեմոկրատիկ» պետություն լինի նա:

Դրա հետևանքով մենք ունենք — բանվոր դասակարգի թվի կրկնակի աճում 1928 թվի համեմատությամբ, ժողովրդական յեկամտի աճում 85 տոկոս՝ 1928 թվականի դեմաց, բանվորների ու ծառայողների տարեկան միջին աշխատավարձի աճում 67 տոկոս՝ 1928 թվի դեմաց, այսինքը հնդամյակի գերակատարում 18 տակոս: Հնդամյա պլան

նի 111 տոկոս դերակատարում սոցապահովագրութեան ֆոնդի վերաբերմամբ: Հասարակական սննդի աճում վեց անգամ (արդյունաբերական վճռական ճյուղերի քանվորները գումարները 70 տոկոսն ընդգրկված են հանրային սնունդով):

Չնայած մեր թերութիւններին՝ նյութական դրութեան նր տարեց տարի բարելավվում է: Այդ բանը կարող է չը ներկատել միայն Սորհրդային իշխանութեան դասակարգային թշնամին: Դեռ ևս նա լիովին չի սպառնովված, բայց այն չի յեղ կարելի անել կարճ ժամանակամիջոցում:

Արդյունաբերութեան ու գյուղական տնտեսութեան աճումը, բանվորների ու գյուղացիների պահանջների աճումը սպորանքաշրջանառութեան աշխուժացում և ընդարձակում են առաջացրել:

Քաղաքի և գյուղի դոզման հիմնական ձևն է հանդի տնում արտադրական կապը, սակայն միայն արտադրական կապը բավական չէ, — դա պետք է լրացվի սպորանքային կապով:

Ինչի՞ ենք մենք հասել խորհրդային առևտուր ծավալելու գործում:

ա) Թեթեւ արդյունաբերութիւնը 1928-ի համեմատութեամբ աճել է 187 տոկոս:

բ) Մանրածախք առևտրում սպորանքային մասսայի աճելացում 175 տոկոս:

գ) Ասպրանքային ցանցն աճել է 158 հազար խանութով:

Ահա սրանք են առաջին հնգամյակի կատարման արդյունքները:

Սորհրդային Միութիւնը վերածվեց առաջավոր տեխնիկայի յերկրի:

Սորհրդային Միութիւնը դարձել է ինդուստրիալ, գորավոր, ինքնուրույն և կապիտալիզմի քմահաճույքներէն անկախ յերկրի:

Սորհրդային Միութիւնում այնպիսի ինդուստրիա յետեղծված, վորն ընդունակ է վոչ միայն արդյունաբերութիւնը վերադնել ու վերակազմել, այլև արանսպորտն ու գյուղատնտեսութիւնը:

Սորհրդային Միութիւնում ընդարձակված է տնտեսութեան սոցիալիստական ձեւերի ֆրոնտն ու տնտեսական բազա յետեղծված դասակարգերը վոչնչացնելու համար:

Սորհրդային Միութիւնը վերածվեց պաշտպանունակութեան տեսակետից հզոր յերկրի:

Այն ժամանակ, յերբ Սորհրդային Միութիւնը այդպիսի մեծագույն հաջողութիւններ է ունեցել, համաշխարհային կապիտալիզմը դաժան ճգնաժամով է համակված:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1928 թ. համեմատութեամբ՝ արդյունաբերական արտադրանքն իջել է մինչև 56 տոկոս, Անգլիայում — 80 տոկոս, Գերմանիայում — 55 տոկոս և Լեհաստանում — 54 տոկոս:

Կրճատվում են ցանքային տարածութիւնները: Աճում է գործազրկութիւնը (30-40 միլիոն) և գյուղի աղքատացումը: Կրճատվում է առևտուրն ու ընկնում աշխատավոր մասսաների գնելու ընդունակութիւնը:

Դա ցույց է տալիս, վոր տնտեսութեան կապիտալիստական սիստեմը մեռնում է և տնտեսութեան միակ լավագույն սիստեմը՝ տնտեսութեան խորհրդային սիստեմն է:

Կուսակցութիւնն առաջին հնգամյակում ունեցած հաջողութիւնները ձեռք է բերել կատաղի պայքար մղելով թշնամական դասակարգերի մնացորդների դեմ:

Դուրս են մղված ու ջախջախված մեռնող դասակարգերի վերջին մնացորդները — արդյունաբերողներն ու նրանց արբանյակները, առևտրականները, ազնվականները, տերտերները, կուլակները, սպայութիւնն ու մնացած թափ թփուկները:

Սակայն մենք պետք է հիշենք, վոր կապիտալիստական դասակարգերի մնացորդները դեռևս վերջնականապես չեն վոչնչացվել և դա պահանջում է մեղնից բարձրացնել մեր զգաստութիւնը:

Սորհրդային Միութեան մեջ ցրված կապիտալիստական դասակարգերի մնացորդները նոր գործելակերպ են բանեցնում իրենց պայքարում. փոխանակ բացարձակ դրոհի, վորտեղ նրանք բաղմիցս ջախջախվել և վորն այլևս կիրառել չեն կարող, — սկսել են դադանի ականափոր աշխատանք

տանել — աշխատում են վորտեղ հնարավոր և և ինչպես հը
նարավոր և՛ ապահանել ու վնասել, կեղտոտել ու կողոպ-
տել, պայթեցնել մեզ ներսից, յերբեմն գործ տեսնել մեզ
մտախի խաղերի միջոցով:

Մենք պետք և ամենայն մտահանութեամբ մերկաց-
նենք դասակարգային թշնամու նոր մանկվրները և նրանց
վերջնականապես վոչնչացնենք:

«Պրոլետարիատի ուժեղ և հզոր դիկտատուրա, —
անա թե մեզ ինչ և հարկավոր այժմ, մեռնող դասա-
կարգերի վերջին մանցորդները ջարդ ու փշուր անելու
և նրանց գողային դավերը ջարդելու համար», —
ասել և ընկ. Ստալինը կենտկոմի պլենումում:

Խորհրդային Միութեան գորութեան անուր պետք և
ուժեղացնի խորհրդային իշխանութեան ջախջախված, բայց
զեռ չփոչնչացված թշնամիներին: Իհարկե, դա սարսափելի
չէ, վորովհետեւ նրանք վոչինչ չեն կարող փոխել, սակայն
մեծ հեղափոխական զգաստութեան և հարկավոր, վոր նը-
րանց հետ բանն արագութեամբ վերջացվի և առանց առան
ձին դժգոհի:

Ստալին հնգամյախի հաջողութեանները ձեռք են բեր-
ված մտահան պայքարով աշխատանքի արագացրած տեմպե
րի համար, վոր մեր կառավարութեանն և վերցրել:

Թե արդյունաբերութեան, և թե գյուղական տնտեսու-
թեան սուպերիզում արագացրած տեմպերի այդ քաղաքա-
կանութեան անարգամն ճիշտ և յեղել, վորովհետեւ մենք
հետամնաց յերկիր ելինք, վորովհետեւ այդ եր պահանջում
յերկրի պաշտպանութեան շահերը, վորովհետեւ մենք հնա
րավորութեան ունենք արագացրած տեմպերը կիրառելու
առաջին հնգամյախում:

Այդ պատճառով կուսակցութեանն ամենայն սկզբուն-
քայնութեամբ և անողորմութեամբ հետ և չպրտել ու ջախ-
ջախել աշերին ու «ձախերին», վորոնք ուզում եյին կու-
սակցութեանը շեղել այդ ուղուց:

Անա թե ինչ և ասել կենտկոմի հունվարի պլենում-
ում աշերի ղեկավարներից մեկը, Ռիկովը, վորը Տոմսկու,
Ռուսարինի և մյուսների հետ պայքար եր մղում կենտկո-
մի գծի դեմ.

«Յեթե կուսակցութեանը դնար այն դժով, վոր յես
եյի ստալարիում իր ժամանակ, ապա ներկա ժամանա-
կում ևս մենք ինդուստրացման սուպերիզում այն հաջո-
ղութեանները չեյին ունենա, վորոնց մասին արված զե
կուցումը լսեցինք. մենք գյուղատնտեսական արտադրու-
թեան սուպերիզում համախապրած սեկտոր, սոցիալիս-
տական սեկտոր չեյինք ունենա... Մենք մեր յերկրում
սեկտորաբար կանա, կասկիտալիտական իրավերի ու-
ժեղացում կունենայինք: Վերջին հաջով՝ կապիտա-
լիտական իրավերի ուժեղացումը պրոլետարիական դիկ-
տատուրայի յերկրում պետք և հանդեր բուրժուական
վերականգմանը»:

Դուք գիտեք, թե կուսակցութեանը դեպի ուր եյին քա
չում արոցկիտոները, վորոնք համալսարհային հակահեղա
փոխութեան ստալավոր ջոկատ են դարձել. դուք գիտեք,
թե կուսակցութեանը դեպի ուր եյին քաչում «ձախե-
րը»:

Նրանց դիրքերը նույնպես, ինչպես և աջերի դիրքե-
րը՝ մեր յերկիրը վերջին հաջով բուրժուական վերական-
գւրման ու ինտերվենցիայի կհասցնեն:

Այլերն ու «ձախերը» և արոցկիտոները կենտկոմի գծի
դեմ մղած պայքարում՝ իրենց հարվածն ուղղել են կենտ
կոմի ղեկավարութեան դեմ, ընկ. Ստալինի դեմ:

Կենտկոմի հունվարի պլենումում հանդես գալով՝ Տոմ
սկին, Ռիկովին ու Ռուսարինը ստիպված եյին այդ բանը
խոստովանել:

Տոմսկին ասել և.

«Իմ ուղղիցիոն դործունեութեան ժամանակ յես
ինքս քանիցս քննադատութեամբ դուրս եմ յեկել կու-
սակցութեանն սեկտիի դեմ, հարձակվելով կուսակցու-
թեան ստալինորը ընկ. Ստալինի վրա: Իհարկե, այն ժա-
մանակ յես այդպիսի յելութեան ունեցել եմ վոչ թե նրա
համար, վոր վերքե անձնական ստիթ եմ ունեցել, կամ
չեմ հարզել ընկ. Ստալինին, — յես նրան չափազանց
չատ տարիներ եմ ճանաչում միտանող կատարած աշխա-
տանքներում, վորպես հետեւիողական բոլշեվիկի և ան-
հողող հեղափոխականի, վորպեսզի նման բան կարո-

դանար տեղի ունենալ — այլ նրա համար, վոր հանդես գալով ու հովերով կուսակցութեան դժի դեմ, աջ ուղղի ցիան, վորում և յես, նրա համար եյին մեր հարձակումները կենտրոնացրել ընկ. Ստալինի վրա, վորովհետև նա իրերովն էր, կաղմակերպիչ, ամբողջ դործնական աշխատանքի ղեկավար էր և կուսակցութեան առաջնորդ: Վորովհետև նա ղեկավարութեան մեջ ամենից ավելի ցայտուն դեմք էր, վորովհետև նա քաղաքակա նապես ամենից ավելի սուր աչք և հաստատուն ձեռք ունի, վորովհետև նա միշտ ամենից ավելի վճռակա նորեն է դուրս յեկել ամեն տեսակ թեքումների դեմ, յեղել է ամենատուկունն ու հետեւողական մարտիկը կուսակցութեան դժի համար»:

Թիկովը նույնպես խոստովանել է.
«Ապրած չորս տարիները այնպես, ինչպես մեր յեր կիրն և ապրել, չորս տարիներ, վորոնցում արված է այն, ինչ լացինք մենք ղեկուցումներում, դա պատմական նշանակութիւն ունեցող վկայական է և՛ ղեկավարութեան, և՛ կուսակցութեան առաջնորդ ընկ. Ստալինի համար: Ընկ. Ստալինի գլխավորած այդ կենտրոնի ղեկավարութեամբ, կուսակցութեան դրոշի տակ, կուսակցութեան լողուններով մենք կզնանք ղեպի նոր հաղթանակներ, ղեպի յերկրորդ հնգամյակի հաղթական ավարտումը»:

Գլխավոր վտանգ հանդիսացող աջերի և «ձախերի» դեմ մղվող վճռական պայքարը շարունակում է մնալ մեր կարեւորագույն պայքարականութիւնը:

Սոսալին հնգամյակի հանրագումարը տալով՝ ամբողջ կուսակցութիւնը մատնանշում է այն առանձին դեբը, վոր այդ հնգամյակի իրադրման խնդրում ունեցել է ընկեր Ստալինը, վոր ղեկավարելով կենտրոնին է ամբողջ կուսակցութեանը, նրան հասցրել է դեռևս չտեսնված հաղթանակներ:

Հնգամյակի արդիւնները գլխավոր դարձրեց մեր թշնամիների պնդումներն այն մասին, թե հնգամյակն ուսույթիս յե, անիրագործելի յերազանք, թե բանվոր դասակարգը միայն քանդելու յե ընդունակ և վոչ կառուցելու, թե

չի կարելի սոցիալիզմ կառուցել առանձին վերցրած մի յերկրում:

«Հնգամյակի հանրագումարը ցույց է տվել, վոր կուսակցութիւնն անհաղթ է, յեթե նա դիտե, թե ուր է տանում գործը և չի վախենում դժվարութիւններից» — ասել է ընկ. Ստալինը, ավարտելով իր ղեկուցումը կոմի պլենումում:

Մեր լենինյան կենտրոնը, ընկեր Ստալինի ղեկավարութեամբ՝ չի վախեցել դժվարութիւններից: Կենտրոնը գիտեր, թե ուր է տանում կուսակցութեանը և դրանով ապահովեց սոցիալիստական շինարարութեան հաջողութիւնները:

ՅԵՐԿՐՈՐԳ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԽՆԳԻՐՆԵՐԸ

Հաղթական կերպով ավարտելով առաջին հնգամյակը չորս տարում, մենք թեւակոխել ենք յերկրորդ հնգամյակի առաջին տարին:

Պլենումը քննարկել ու հաստատել է մեր աշխատանքի դրուսթիւնը 1933 թվում:

Սոսալին հնգամյակի հաջողութիւնները հնարաւորութեան և անհրաժեշտութիւնն են ստեղծել վերցնել ավելի փոքր արագութեան տեմպեր մեր զարգացման գործում և գլխավոր ուշադրութեանը դարձնել նոր ձեռնարկութիւնները և նոր տեխնիկայի յուրացմանը, սոսալին հնգամյակի, նոր գործարանների կառուցման հնգամյակի համեմատութեամբ: Այդ, իհարկե չի բացասում, այլ յենթադրում է նոր շինարարութիւնը:

Նոր շինարարութեան լողունը պիտի լրացնել նոր ձեռնարկութիւնները յուրացման, լողունով:

Գյուղատնտեսութեան բնագավառում գլխավոր ուշադրութեանը պիտի դարձնել նոր ձեռնարկութիւնների կաղմակերպչական ամրապնդման վրա — կոլտոզներում և սովխոզներում:

Գլխավոր ուշադրութիւնը պիտի կենտրոնացնել վոչ թե արտադրանքի քանակական աճման, այլ վորակի բարելավման վրա, վոչ թե ցանքաթ ստարածութեան ընդարձակ-

ման վրա, այլ բերքատույթյան բարձրացման վրա հողա-
դործութեան մեջ: Այդ տեսանկյունից պլանումը հաստատել
է 1933 թվի ստուգիչ թվերը: Պլանումը նախադրել է.

Արդյունաբերութեան բնագումարում.

ա) Արտադրանքի դերաճում 16,5 տոկոսով 1932 թվի
համեմատությամբ. (ինչ է նշանակում արտադրանքի դեր
աճում 16,5 տոկոսով: 1 տոկոսը — 320-340 միլիոն ուր-
լի, իսկ 16,5 տոկոսը կապիլացնի արտադրանքի ծավալը
29,2 միլիարդ ուրլով 1932 թ. մինչև 34 միլիարդ ուրլի
1933 թվում):

բ) Կապիտալի ներդրումներ — 1932 թվի 9,164 միլիոնի
փոխարեն 10,109 միլիոն ուրլի:

գ) Աշխատանքի արտադրողականության բարձրացում՝
14 տոկոս:

դ) Ինքնաթիվերի իջեցում՝ 3,9 տոկոս:

ե) Աշխատավարձի աճում՝ 9 տոկոս:

Գյուղատնտեսության բնագումարում ա) դարձնանացանի
տարածությունը 95 միլիոն հեկտար և աշնանացանի տա-
րածությունը — 38,5 միլիոն հեկտար:

բ) Հասցնել Մ. Տ. Կայանների թիվը մինչև 2.768:

գ) Կապիտալի ներդրումներ՝ 2.148 միլիոն ուրլի:

— Յես չեմ բերում պլանի նախադրումները պատկերող
թվերը սոցչինարարութեան մեջ աճած ճյուղերի նկատմամբ,
նրանք հրատարակված են փորձումներում:

1933 թվի այդ խնդիրների կատարման աստիճանը
մեր գլխավոր ուշադրությունը պիտի դարձվի աշխատան-
քի արտադրողականության բարձրացման և ինքնաթիվերի
իջեցման վրա:

«Աշխատանքի արտադրողականությունը — այդ վեր
ջին հաշվով ամենից գլխավորն է, ամենակարևորը, նոր
հաստատություն, այսինքն սոցիալիզմ կառուցելու հա-
մար» — ասել է ընդ. Լենինը:

Մենք չենք կատարել հնգամյակի պլանային առաջադ-
րություններն աշխատանքի արտադրողականության բարձր
բացման գործում: Առանձնապես վատ է յեղել 1932 թ. — մի
միայն մեկ տոկոս գերաճում ունեցանք և այն էլ ամբողջ
վին ի հաշիվ ծանր արդյունաբերության:

1933 թվի աշխատանքի արտադրողականության աճման
ամեն մի տոկոսը հաստատար կլինի 290 միլիոն ուրլով,
իսկ ընդամենը չորս ժողովրդատի դեռավ չորս միլիարդ ուրլ
լու:

Լենինը մատնանշել է, վոր աշխատանքի արտադրողա-
կանության բարձրացումը կախված է վոչ միայն մրցու-
թյան սոցիալիստական կադակերպումից, այլ և

«հարկադրում գործադրելով այնպես, վորպեսզի պրո-
լետարիատի դիկտատուրայի լոզունգը չապականվի պը-
րոլետարական իշխանության հեղհեղուկ, շիթ դրու-
թյան պրակտիկայով»:

Ընդ. Լենինի այդ ցուցմունքներից են յեղում կուսակցու-
թյան և իշխանության միջոցառումները պրոդուկտների դեմ
բանվորական մատակարարման ուղղությամբ, վորոնց մենք
պետք է ամենայն աչալըջությամբ ու խստությամբ կիրա-
ռենք:

ՊԱՅԲԱՐ ՆԱՎԹԻ ՅԵՎ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ — ՊԱՅԲԱՐ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ


1933 թվի խնդիրները մեզ վրա, Անդրկովկասի, մասնա
վորասպես Ադրբեյջանի և Բազմի բուլղեիկները վրա մեծ պա-
տասխանատվություն են դնում:

Բոլոր այն խնդիրներից, վորոնք կանգնած են մեր ա-
ռաջ, յես մանրամասն կանգ կառնեմ յերկու հիմնական խն-
դիրների — նավթի և բամբակի վրա:

Մենք աշխատում ենք Սորհ. Միութեան նավթային ար-
դյունաբերության վճռական տեղամասում:

Առաջին հնգամյակի հետևանքով մենք մեծ հաջողու-
թյունների յենք հասել Սորհրդային Միութեան նավթային
արդյունաբերության զարգացման մեջ. նավթահանություն-
ը մեխանիզացիայի յե յենթարկված համարյա 100%-ով,
լիովին վերացված է ժերնիկայով նավթ հանելը, վոր փոխա-
րինված է խոր նաստաներով ու կամպրեսորներով, եյեբարո
ներդրանք նավթահանության մեխանիզացիայի յենթարկե-
լու մեջ կիրառված է համարյա թե 100 տոկոսով, լայն կեր

37928
1933



պով կիրառվում է հորափորութեան պատճառով մեթոդը (93 առկոս 1932 թ.), հիմնականում լուծված է նախկինում չափա-
թեան վերակառուցման պրոբլեման (պարզագույն նախկին-
մեթոդներ ստանալու տոկոսը 1932 թվին հասցրված է 41
տոկոսի՝ 1931 թվի 31 տոկոսի դիմաց) :

1932 թվում հանելված է 22,2 միլիոն տոնն նախթ՝ հըն-
գամյակի հինգերորդ տարվա 21,7 միլիոն տոննի հանդեպ,
այսինքն՝ հնգամյակը զերակատարված է չորս տարում :

Ուրհրդային Միութեան նախթային արդյունաբերու-
թյան զարգացման այդ հաջողութիւնների դործում պատ-
վավոր տեղը պատկանում է Ազնեյթին :

Բարձր բուլջեիկների և բանվորների հերոսական ջանքե-
րով Ազնեյթի հնգամյակը կատարված է յերկու և կես տա-
րում :

Այդ հերոսական եջ է Բազլի պրոլետարիատի կողմից
սոցիալիստական հնգամյակի համար մղած պայքարում : Սա
կայն, ընկերներ, նախթային Բազլի պրոլետարիատի այդ
խաչորագույն նվաճումը չպետք է նսեմացնի մեր աշխատան-
քի թերութիւնները նախթի պայքարում յեւլ, մասնավորա-
պես, այն մեծ թերակատարումը, վոր ունենք մենք 1932 թը
վին : Ազնեյթի պլանը 1932 թվին հավասար էր 15-500 հա-
զար տոնն նախթի՝ զազի հետ միասին, մինչ դեռ մենք այդ
պլանը կատարել ենք տարով միայն 12-181-000 տոնն, ալ-
սինքն յերկրին չենք տակ 3-300 հազար տոնն նախթ : Յեթե
այդ համեմատները 31 թ. թվերի հետ, պետք է յեզրակաց-
նենք, վոր 1932 թվին մենք հանել ենք մեկ միլիոն տոնն
նախթ պակաս քան 1931 թվին :

Մոտերքս Մոսկվայում մեզ ասել են, վոր վառելիքի
բացակայութեան պատճառով մի շարք մետաղադործական
գործարաններ աշխատում են ընդհատումներով, մի քանիսը
մինչև իսկ կանգնած են, վառելիքի մեծ կարիք են զգում
մեր արակտորները Ուրհրդային Միութեան մի շարք ուսյոն
ներում :

Յեթե հետեւենք նախթահանութեան կորագծին, ապա
կատացվի հետեւյալ պատկերը. հուլիս — 77 տոկոս, ոգոս-
տոս — 71 տոկոս, սեպտեմբեր — 65 տոկոս և այլն :

Պարզ է, վոր ամեն մի հենում որ յեկտիւլ պատճառների
վրա՝ անթուլյատրելի յէ : Նախթի անբարենպաստ դրու-
թեան պատճառները վորոնել մեզնից դուրս, ճիշտ չէր լի-
նի, ալբալիսի տրամադրութիւնները մեզ կհասցնէյին նոր
ճեղքվածքների, այն պլաններին նոր թերակատարման, վոր
ստանում ենք մենք :

Նախթի պլանները չկատարման պատճառները գտնվում
են հենց մեր մեջ :

Նախթի համար մղվող պայքարը 1932 թվին վատ է
զեկաւարել Ազնեյթի անտեստիան — տեխնիկական զեկա-
ւարութիւնը, լսով չեն զեկաւարել Ազնեյթի կուսի (բ) կենտ
կոմն ու Բազլի Կոմիտեն, վատ է ոգնել այդ պայքարում
Բազլի բուլջեիկներին նսե կուսակցութեան Յերկրային կու-
միտեն : Այժմ պետք է հաստատասպես ձեռք դարկել նախթի
գործին : Պետք է կարմանկերպել կոնկրետ և գպերատիւ
պայքար նախթի համար յուլյաքանչյուր տեղամասում : Հար-
կաւոր է սուրյա և սխտեմաստիկ ոգնութիւն ու տժանդա-
կութիւն Ազնեյթի զեկաւարութիւնը, պետք է ոժանդա-
կել ընկերներ Բարիկոմիին, Աղաւիղը լիկային և նրանց, ու-
քեր աշխատում են աշխտեղ : Առանց Ազնեյթի այդ ամենուր-
յա ուշադրութիւն դարձնելուն, առանց այդ ոժանդակու-
թեան, ինչպիսի էլ լսով զեկաւար լինի աշխտեղ, ինչ էլ վոր
անի նա, նրա աշխատանքը, անկասկած, կկազի : Ոգնու-
թիւնը պետք է կրի դործնական, պրակտիկ բնույթ վոր
թե քանաձեւերով, վոր թե ժողովներում արած հարաբա-
րութիւններով, այլ ոգնութիւնը պիտի լինի գործով, այն
պես, վոր այդ ոգնութիւնը զգացվի :

Մենք ձեզ հետ միասին պետք է ձեռք բերենք տեխնի-
կական հին ու նոր կարգերի համերաշխ ու միատեղ աշխա-
տանքը : Յեւ հին աւ նոր տեխնիկական կարգերը Ազնեյթի
կուսի (բ) կենտկոմի ու Բազլի Կոմիտեի զեկաւարու-
թեամբ պետք է լիովին մոբիլիզացիայի յեթարկվեն նախ-
թի պլանը կատարելու համար : Հին կարգերը պետք է ի-
րենց ամբողջ հարուստ փորձառութիւնը սեփականութիւն
դարձնեն տեխնիկական յերկտասարդ կարգերին և յերկտա-
սարդ կարգերին էլ գործով պետք է ցույց տան, վոր իրենք
կարող են աշխատել, կարող են իսկական գործարար յե-

նանդուն պայքար կազմակերպել նախքին համար, նախքին արդյունաբերութեան ամբողջ դործը լայնաբեր կերպով կազմակերպելու համար:

Նախքը ճեղքվածք ունի: Նրան այդ ճեղքվածքից հանելը — մեր ամբողջ կուսակցութեան ու կոմյերխտակաճ կազմակերպութեանն էր դործն է, ամեն մի բոլշևիկ, ամեն մի կոմյերխտակաճ պետք է ամենի բաժ աշխատի, քան միջին աշխատի է, վորովհետեւ այդ է պարտավորեցնում մեզինց ամեն մեկին մեր կուսակցութեանը:

Կուսակցութեան Յերկրային կոմիտեն Արկղակուաի (բ) Կենտկոմի ու Բազմի կոմիտեյի հետ միասին հանուն նախքի մղող պայքարի ծախարուն ղեկավարութեան են կազմակերպում, վորովհետեւ կուսակցութեան Յերկրային կոմիտեն ամենց Բազմի նախքի — Յերկրային կոմիտե չէ: Նա Յերկրային կոմիտե չի լինի, յետեւ որեցոր Բազմի բոլշևիկներին հետ միասին չարաբարի նախքային ծրագրերը հաջողութեամբ կատարելու համար: Յերկրային կոմիտեն չի կարող մի կողմ քաշել նախքի համար մղող պայքարից — այդպէս ենք հասկանում Յերկրային կոմիտեյի աշխատանքը և այդ պես կկատուցենք այդ աշխատանքը ձեզ հետ միասին:

Անդրկովկասում, մասնավորապես Բազմում, այնպիսի գրույցներ կան, վորպես թե նախքի պայքարում Բազմի բանվորներին, Բազմի բոլշևիկներին «Մոսկվան չի ողնում»: Թե Մոսկվայում ով չի ողնում, այդ չեն ասում, այլ պարզապես պնդում են «չի ողնում» և պրծալ: Ինչո՞վ չի ողնում: Արդյո՞ք նախքային արդյունաբերութեանը բարձրացնելու մեջ, արդյո՞ք նախքային սլաններին հաջող կատարելու համար, վոր Մոսկվայում մշակված են մեզ հետ վիճակին: Այդ գրույցները մեր խոսքերը չեն, այլ ոտարներին, մեզ խորթ մարդկանց գրույցներն են: Ինչ վոր մեկը, մեր մեջ ոտարը, տարածում է այդ գրույցները: Այն գրույցները կատարյալ երասլունքով կարելի չի կոչել ապակազմակերպութեան գրույցներ, վորոնք զբարտանք են չալում ամեն աշխատանքի ողնութեան վրա, վոր Մոսկվան է ցույց տալիս մեզ նախքի համար մղած պայքարում, նախքային Բազմի ուղաբերութեանը բարելով, Բազմի, վոր մեր յերկրի բանվոր դասակարգի փառապանծ ջոկատներից մեկն է:

Յես կարծում եմ, ծիծաղելի կլինի, և այդ պայցուցելու վոր մի կարելիք չկա, վոր Մոսկվան մեզ հետ միասին Բազմի բոլշևիկներին հետ միասին պայքարում է նախքի համար, ղեկավարում է այդ պայքարը, ամեն որ ողնելով մեզ:

Դա կարելի չէ տեսնել այն սրբնակներին ու թիւրից, վոր յես ձեզ ցուցադրեցի Արքեպիսկոպոսի նախքային արդյունաբերութեան, վերակառուցման նկարագր: Վերջին ամբողջ ժամանակը Մանր Արդյունաբերութեան Կոմիտեի անդամ վարդ դործի ճեղքը — ընկ: Կոստորը և Գանչին — շարունակ նստած են այստեղ, Բազմում ձեզ հետ միասին մշակում են հարցերը և ուղիները, թե ինչպես ամենի բաժ է կազմակերպել պայքարը նախքի համար: Այդ և դրանց նման գրույցներն ընդունակ են միայն մի նպատակի ծառայելու — դեմոքրիտիկացնել ամեն բերելու նախքի պայքարում: Մեր ամբողջ նախքային արդյունաբերութեանը դանդում է մեր ամբողջ կուսակցութեան առանձին յարված ուղաբերութեան տակ: Չե՞ վոր միայն վերջերս, այնտեղ մենք ասացանք ընկեր Որջունիկիձեի նամակին ընկ: Մոսկվայի ցուցմունքներով նախքի նախքի համար մղած պայքարին: Վերջերս մի խոսակցութեան ունեցաւ ընկ: Մերդո Որջունիկիձեի հետ, վորն ընկ: Բարինովի ներկայութեամբ հայտարարեց, թե այնպես, ինչպես ասալ, այնպես, ինչպես և այժմ, նախքի համար մղած պայքարում մեզ համար մեծ խնդիր է դրված, վոր ինչ էլ լինի, պետք է կատարվի: Մենք խորհուրդներին յերկրին 1933 թվին պետք է ամեն 14-400 հարյուր տոնն նախք, իսկ դեպի հետ միասին 15 միլիոն տոնն: Բազմի ամբողջ կազմակերպութեան սրատու դործն է, Բազմի բոլոր բանվորների պատու դործն է վոր միայն կատարել, այլ և դերակատարել այդ պլանը, իսկ դրան մենք կարող ենք հասնել միայն այն սրայանով, յետեւ ամենց ամենի խոսքերին, ամենց ամենի վիճարկութեաններին, հենց վարդանից ձեռները քաշած, կոնկրետ ու ուղաբերով աշխատանքի անցնենք: Միայն ղեկուցումներով ու բանաձեւերով, վորքան էլ նրանք լավ կազմված լինեն, հետո չես դես:

Բազմի բանվորները — Անդրկովկասյան պրոլետարիտների ասուլիսատար ջոկատն են: Բազմի կազմակերպութեանը — ասուլիսատար պրոլետարիտական կազմակերպութեան է Ան-

զըրկովկասում: Առաջատար կազմակերպութեան պատկա-
վոր կոչումը պարտավորեցնում և սակ վաղուհե ցուցանել
ներ, հաստատամտութեան, բուլղերիկյան աշխատանքի վաղ
լուսն որինակներ, վարակելու ուրիշներին սրայքարի հերոսա-
կան որինակներով:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի ու ԿՎՀ հունվարյան պլե-
նումի վորոշումներն ամբողջ հասակով մեր առաջ են դնում
գյուղակիան տնտեսութեան ղեկավարման բարելավման խըն
դիրները՝ գյուղում աշխատելու մասին, ընդ. Ստալինի ցուց
մուքների բուլղերիկորեն կիրառման հիման վրա գյուղում մեր
աշխատանքի թերութեաններին այն հինգ պատճառները վե-
րացնելու հիման վրա, վորոնց մասին մատնանշել և իր ճա-
ռում ընդ. Ստալինը:

Դուք գիտեք, վոր մեզ մոտ բամբակի սլանն էլ չի կա-
տարված. մենք այս տարի 24 հազար տոնն բամբակ պա-
կաս ենք սվել, իսկ 1931 թ. համեմատութեամբ 15 հազար
տոնն բամբակ պակաս ենք հանձնել: Դուք տեսնում եք, վոր
բամբակի ցուցանիչներին գործը չստիպարանց անբարեհաջող է:
Յերկրային Կոմիտեն Աղլերմեկուսի (բ) Կենտկոմի հետ մի
ասին բամբակահատարի ժամանակ մի շարք ուսյոնների սո-
րացրել և իր ակտիվ, վորը տեղերումն և յեղել, ուսում-
նասիրել և բամբակի պայքարի հարցերը, վորի հետևանքով
մենք մի շարք նյութեր ունենք, վորոնք մեզ պատկերաց-
նում են Աղլերմեկուսի գյուղի դրութեանը:

Աղլերմեկուսում հիմնական բամբակային տարածութեանը
գտնվում և կոլխոզների ձեռքին: Բամբակային ուսյոնների
կոլլեկտիվացման միջին տոկոսը հարկատար և 67 տոկոսի,
բայց մեզ մոտ ուսյոններ կան, վորտեղ կոլլեկտիվացումը
հասնում և 90 տոկոսի: Հետևապար բամբակի սլանը չկա-
տարելու անշուշտ ցուցանիչ և կոլխոզների թույլ աշխատան
քի և այն անբարեհաջող աշխատանքի, վոր Աղլերմեկուսում անց
և կայգում գոյութեան ունեցող կոլխոզների կազմակերպ-
չա-տնտեսական ու քաղաքական ամբամբան գործում:
Մի շարք գործիչներ հարցին չեն, առել գյուղում աշխատելու
նոր պայմանները, հարջի չեն առել այն, վոր դասակարգա-
յին թշնամին փոխում և իր տակտիկան, գործում և «ըզդոտ
նի ակամատիրութեամբ», քայքայել աշխատանք և սա-

նում, աշխատելով կոլխոզները ներսից պայթեցնել: Մի ամ-
բողջ շարք փաստեր այդ են վկայում ակնհայտ կերպով:

Որինակ՝ վեցցենեք «Փարիզի կոմունա» կոլխոզը՝ Բար
դայի ուսյոնում: Կոլխոզի պեկավարութեանը բողկացած և
կուլակներին, վորոնք բերքահատարի սարտատ և կազմա-
կերպել: Ձայնագուրկ կուլակ, մինչև 1930 թիվը բատրակ
ունեցող վոմն Առաքելովն անտառներին վրա բրկապղի
և խցիկել և նրա աշխատանքի հետևանքով՝ ձմեռը կոտորվել
են բոլոր աշխատող անտառները: Կոլխոզում գլխավոր հարջի
տարը դուրս և յեկել կան Սղնախիկ—Սվազ Յուզբաչևի կալ
վածքի նախիկին կառավարիչը. մյուս հարջիտարը, — Սերոբ
Ակոբովը, մինչև 1930 թիվը սեփական խանութ և ունեցել.
պահեստի վատավարիչը դուրս և յեկել Լեոնային Ղարաբա
ղի հայտնի բեկ՝ Ռուստամ Աղայի վորդին: Ղարաբաղի ըն-
կերները յերևել նրաև ճանաչում են (ծիծաղ):

Շամխորի ուսյոնի կազմակերպչը գյուղում կոլխոզի նախա
դահը նախկին անտարական և. մինչև նրա «աշխատանքը»
կոլխոզում յեղել և 40 տնտեսութեան, այժմ մնացել և 18—ը:
Սեյֆուլի գյուղի կոլխոզի նախագահ Գրիգորյանը հովանա-
վորել և կուլակներին, վորի հետևանքով կոլխոզն են մտել
մի շարք կուլակներ — Ոջյում Ալի, Մեչաղի Սահեղ Արամա
լի ողլի, Հասան Բերբալայ ողլի, Այի Ալի, Բայրամ Ալի
ողլի: Նույն Շամխորի ուսյոնի Լենինֆելդ գյուղի գերմանա
կան կոլխոզն ազոտում և կուլակ-ունեկտր տարրերով: Հե
տևանքը՝ կոլխոզում ուրիշ ազոտութեանների կոմեյրիտա-
կաններ չեն ընդունում (ծիծաղ): Կոլխոզում վարչութեան
նախագահը Բեմը 1924 թիվին խորհուրդի նախագահ լինե-
լով՝ դատվել և սխտանումների համար, 1925—26 թիվերին սպե-
կուլացիայով և պարտարվել: Կոլխոզում նախկին կուլակներ
են աշխատում, իրանք, կոլխոզիկները 50 տոկոս չեն աշ-
խատում, ուրիշներին են վարձում և աշխատել ստիպում:
Այդ կոլխոզի մասին գիտենք. այդ մասին գիտեր ուսյոնի
ակտիվաստարածին վարիչը, գիտեր ուսյոնի կազմաթմինի վա
րիչը և նրանց հետ միասին գիտեր ուսյոնական ՎՀ-ԲԳՏ-ի
տեսուչ Բազիլովը, վորը սակայն լուել էր և,
վոր միայն լուել, այլև հաճախ լինում էր այդ կոլխոզում
ու... խմում այնտեղ: Նախիջևանում, Յերկրային Կոմիտեի

և Արքեպիսկոպոսի (բ) Կենսակոմի ձեռք առած միջոցներէն 45 տո, մոտ 10 տրում՝ մոտամտրապէս 200 կուլտիպիս տնտեսութեաններ են գտնուել — հետագայէն կոլտիպիսներէն: Գյուղչափի Սարկիթի գյուղէ Մուսաբեկովի անվան կոլտիպի նախա գահը 33 փութ կոլտիպիսին բամբակ և սպիւ մի կուլտիպի, վորպեսզի աչք կուլտիպը քաղցնի իրեն տրուած հաստատուն առաջադրութեանը: Այդպիսի ուրիշաններ շատ կարելի չեն բերել:

Լենինի անվան կոլտիպի վարչութեան նախագահը դուրս և յեկել մի նախկին խոշոր առևտրական, Չեյնալ Չեյնալով վր. նրա տեղապահը՝ յենիտիպիպի Ռասխովով, իսկ նույն գյուղխորհրդի Ալեքանդր Վարչովի վարչութեան նախագահ և խցիկի նախկին տնտեսներ Իմասյիլ Իրադ ուղին:

Շատ ուշադրով են Բելլասովարի ռալոնում յեղած փաստերը, վորոնց վրա ուղում մտ կանդ առնել: Այդ ռալոնն և յեղել ուղարկված Անդրեյկովի և Արքեպիսկոպոսի (բ) Կենսակոմի լիազոր ընկ. Սումբատովը, վորն աչքտեղ հետագոտել և մի շարք գյուղխորհուրդներէ կոլտիպիսներ: Իր հետագոտութեան արդիւնները Սումբատովը ղեկուցել և կուլտիպիսին ռալոնին, վորն աչք փաստերը հաստատող և նրան համարատարան ղեկահաստական տոլող վորոտում և կալցել: «Կարմիր աշխատանք» կոլտիպում բամբակի և հաստահատիկային կուլտուրայի միաստակական ցանքս և յեղել կարմակերպիւմ. բրիգադիները սերմը քահիներից թափել են ջրով լի փոսի մէջ այն նպատակով, վորպեսզի փչացնեն սերմը, վոր և հետ դուր են թափել, ինչպէս անպետք: Յանքն սկսելուց՝ ցորենն ու դարին իրար են խառնել: Իրա հետևանքով վորչաչված են շատ մեծ ցանքս տարածութիւններ: Այդ ամենը տեղի չեն ունեցել նրա համար, վոր կուլտիպիսին են ներա խցիկի կոլտիպ, վոր նախագահը, տնտեսական մասի վարչը և շատ բրիգադիները նախկին կուլտիպիս են, դուրս յեկել. նախագահն աչք խմբակի դուլին և անցել, վորը կարմակերպիւմ կերպով միաստակութեամբ և զրազովել: Կոլտիպիսը կարմակերպիւմ ժամանակ համայնեցրած 110 ձիերից միայն 31-ն և մնացել, վորոնցից 19-ն աչքն են նիհարած, վոր արդեն ել պետք չեն վորպէս քաղող ուժ: Լողիները կոլտիպում ալիլի շատ են ստացել, քան նրանք:

վորոնք իսկապէս աշխատել են: Իսկ «Կան Յուլուպ» կոլտիպին են խցիկի հինգ նախկին բեկեր, վորոնցից մեկն և Իրաքիլ կատում Բեկովը, — նախկին ցարական ստրամնիկ, վոր աչք ժամ բրիգադի և կոլտիպում: Այստեղ դարձյալ նույն անվան կատակածելի փչացում, բերքը քանակի ու վորակի կողմէն վատացնելու վերաբերմունք, անփութ վերաբերմունքը դեպի ձիերը և այլն և այլն: Այդ բոլորն անշուշտ նույն վատասական աշխատանքի տարբերն են: Լենինի անվան կոլտիպում նախագահն և նախկին կուլտիպ, վասնիչ, կոտիպ տիպային ապրանքներ թալանելու համար դատված, 1918 թվին իր բատրակին սպանած, առևտրով զրազված Պաֆալովը, վոր աչք... թեկնածու չեն կուլտիպիսին և յեղել կոլտիպի բրիգադի Ալամալին դատապարտված և յեղել մարզանենդութեան համար, 1928 թվին վերադարձել և կոտիպիսները լազերից և աչք բրիգադի և:

Պարզ և, վոր աչք դատակարգային թշնամու միաստակական աշխատանքն ուղղված և յեղել ղեկիւյան, վոր գաղտնի «ակա նախորութեամբ» ներքից պայթեցնի կոլտիպը: Նա միաստակութիւն և արել, տաք անդ դրավելով վորպէս տնտեսական մասի վարչ, հաշիւապար, բրիգադի և այլն: Բելլասովարի ռալոնի 9 կոլտիպում մոտ 3500 փութ հաց և ցար ու ցրիլ արված, մինչ դեռ հացմթեման պլանը չի կատարված: 500 փութից ալիլի հաց և բամբակում ռալոնի զանազան հիմնարկութիւններին և առանձին աշխատողներին՝ զանազան դրութիւններով, ինչպէս ղեկիւյան: Նույնիսկ ռալոնում, վոր նույնպէս կոլտիպ և պայքար կարմակերպիլ հացմթեմում 500 փութ ներքի պլանը վատարելու համար՝ աղունախորհից 500 փութ ստացել և կոլտիպից, դիլի են ամենքը, ովքեր կարողացել են, — ռալոնիսող միութիւնը, ռալոնիսող, կուլտիպիսին, — ռալոնիսող միութիւնը, ռալոնիսող կուլտիպիսին ղեկիւյան ռալոնիսող: «Իսկրա» կոլտիպը կուլտիպիսին ղեկիւյան ռալոնիսող արաջարկութեամբ, համաձայնեցրած ռալոնիսող 150 մի կարգմանի վարչի հետ, կոլտիպիսին ղեկիւյան: Այդ յո վութ ցորեն և ծախել, իսկ մթեմում և բնի. Ստոլինի արդը մի ալիլը անդամ հաստատում և բնի. Ստոլինի արած՝ իր ուժով, վորոշակիութեամբ բացատրի վերլուծութեան անպայման ճշմարիտ լինելը:

«Սակայն կոլտիպիսը, խորհուրդները ներկայացնում

են միայն կազմակերպման ձևը, ճիշտ ե՛ սոցիալիստա կան ձևը, բայց և այնպես կազմակերպման ձևը: Բոլորը կախված է նրանից, թե ինչ բովանդակություն կըրվի այդ ձևում, այսինքն՝ ամենից առաջ նրանից, թե ով է կոլխոզների գլուխը կանչնած և ով է նրանց ղեկավարում»:

Այս փաստերը մի ավելորդ անդամ ցատտուն կերպով ցույց են տալիս, թե գործով ուր է հասցնվում կոլխոզների վրչ պլանային, վրչ սիտեմատիկ ղեկավարությունը, ուր է հասցնում կոլխոզային շինարարության ղեկավարության մեջ յեղած ինքնահոսը:

«Շատերը կարծում են, — առել է ընկ. Ստալինը պլե նումում, — քանի վոր, ասենք կոլլոկալիացման 70-80 տոկոսն ենք հասել այս կամ այն ուղիով, այս կամ այն մարզում, ապա դրանով ամեն ինչ արված է, և մենք կարող ենք գործը թողնել իրերի բնական ընթացքին, գործ թողնել ինքնահոսի, յենթադրելով, թե կոլլեկտի վազումն ինքը կանել իր գործը, ինքը կբարձրացնեն գյուղական անասնությունը: Բայց դա մեծ մոլորություն է»:

Գործն ինքնահոսի թողնելով՝ մենք — իրերի այն դրու թրանն ենք հասնում, ինչ վոր ունենք մի շարք այն ուղիներում, վորոնց որինակը յիս բերի: Պետք է տեսել, վոր մի շարք ուրիշ պատճառներ, Ադրբեյջանի գյուղի մի ամբողջ շարք առանձնահատկություններ պահանջում են, վոր գյուղին առանձին ուշադրություն դարձնենք, զգայնություն հայտնաբերելով, ապա առանձնահատկությունները հաջվի սպենելով: Այնպիսի գործոններ, ինչպիսին են հետամնացությունը ճիշտագրադոկտրինը, ազգակցական նախապաշար մտնքները (թայգիս և այլն) անշուշտ պետք է հաջվի անը վին մեր ամբողջ գյուղական աշխատանքում:

Մեզ մոտ Ադրբեյջանի ուսյուններում հաճախ է պատահում, վոր կոլխոզում է գտնվում բնամանիքի գլուխը իր բոլոր ազգականներով. յեթե կոլխոզից դուրս է գալիս ընտու ներքի գյուղից, ապա բոլոր ազգականներն էլ այնպես են վարվում, ինչպես նա: Կամ արիմակ առապիսի փաստ, ինչպես բամբակային դաշտներում աղամարդկանց ու կանանց աշխա

տանքն է: Այդ միացյալ աշխատանքը շատ դժվար է գնում (ձայներ խեղերից — ճիշտ է): Այդ էլ այն առանձնահատկությունների տարբեր տեսակներից մեկն է, վորոնց հետ մենք ընդհարվում ենք Ադրբեյջանի գյուղում: Կինը բամբակ է հասվաքում, իսկ տղամարդը ձեռքերը մեջքին դրած մասն է դալիս ու սուրում: Այդ բոլոր առանձնահատկությունները, կրկնում են, պետք է հաջվի անվին. պետք է մեծ հոգածու լիթամբ և մեծ ուշադրությամբ չընթացանել կոլխոզնիկին ու աշխատավոր մեծատեսակին՝ համատ կերպով աշխատելով նրանց մեջ:

Բայց, ընկերներ, բանը նրանում է, վոր վրչ միայն նը կատենք փաստերն ու նրանց մասին խոսենք, այլ և ուղիղ յեղբակացություններ հանենք և գործարար պրակտիկ աշխատանք ծավալենք: Բամբակի համար միշտ արագարում մեր ամբողջ աշխատանքի հիմքում պիտի լինի այն ցույց մոնքների բուլեիկյան իրացումը, վորոնց Ստալինն է տվել գյուղում մեր աշխատանքների թերություններին մասին արտասանած իր ճառում, այդ թերությունների հիմք պատճառների վերացումը:

Պետք է նշել Նոեյնայես, վոր շատ ել հղկուն չի մեզ մոտ գյուղում կազմելը ընտրելու գործը: Մենք խոսեցինք կոլխոզների մասին, բայց պետք է խոսել նաև ուսյունական կազմակերպությունների մասին, սովխոզների, ՄՏԿ դիքեկտորների մասին, իսկ մի շարք առանձին ղեկավարում և կուսակցության — ուսյունների քարտուղարների մասին և ուսյունական վերահսկիչ Հանձնաժողովների մասին: Յերբեմն մարդիկ, վորոնց տեղը չի ղեկավար աշխատանքը, բայց էլի այնտեղ են գտնվում, հետաքվում մն մի ուսյունից, փոխադրվում են մի ուրիշը, հետաքվում են յերկրորդից, փոխադրվում են, յերբեք և այլն: Այնպիսի փաստեր կան (ձայներ — կան, բորդը և այլն): Այնպիսի փաստեր կան (ձայներ — կան, կան): Որինակի համար վերցնենք Ադրաշի ուսյունի նախկին քարտուղար Ջեյնալովին: Ժամանակին յերբ նա աշխատանքի մեջ էր Նուխու, Դադասի, Կուսակաշենի, Գյոլջաչի տանքի մեջ էր Նուխու, Դադասի, Կուսակաշենի, Գյոլջաչի կազմակերպություններում, նա մեղադրվում էր քայքայման մեջ և այլն: Սակայն նա քարտուղար է դառնում Ադրաշի ուսյունում: Այժմ Ջեյնալովը համարված է կուսակցությունից և ձեռքազրկված: Յեթե չլինեյին այդ փոխադրությունները,

յեթե Չե յնայովը ժամանակին սրտով յաճ լիներ, հնարովոր չե
 յին լինի այն բացասական հետևանքները վերալիսին մենք ու
 նեցանք Արդարի ուսուցում: Պետք է ստել, վոր մ'ինչև իտկ
 ինչ վոր մեկին ողնել է այդ Չե յնայովին խցիկներու վորպես
 հրահանգել Յերկրիումի անարատը և յերբ այդ հարանի դար
 ձամ և հարց դրվից նրան հեռացնելու մասին, վորմանք պատ
 ճատներ ելին բերում — «չի կարելի հեռացնել, կարող են մի
 բայովրկել»: Ի՞նչ է նշանակում — վերալիսել: Պետք է
 թշնամ, այստեղ նրան գտեցին ու նստեցրին (Բողոքանով —
 «Նախ քան դուռը նստեցրին»): Կարելի չե և ուրիշ որինակ
 ներ բերել, ուրիշներին ել անմանել, վորոնք իրենց համար
 անործան տեղեր են գրավում այժմ ել: Մենք պետի Մալը
 կոմկուտի (բ) Կենտկոմի հետ միասին Կենտկոմի բյուրոյում
 այս հարցը կլնենք, վոր նրանց ժամանակին թշն, վոր նը
 բանք չիճճվեն և մեղ ել չիճճեն (ձայն — վորքան կարելի
 չե շուս): Այս, շուտով այդ կանենք:

Մեծ ուշադրության և արժանի դեկաֆար կազմերի հո
 ճանության հարցը դուրսում: Պարզար կազմերի հոսու
 նության դեմ հանդիսանում է ամենական հարցերից մե
 կը, վորով պետի դրարվել ընդհուպ: Ստիպան չի կարելի ա
 սել, վոր Մալը կոմկուտի (բ) Կենտկոմը այդ հարցով շատ մո
 տիկից է դրարվել: Մեկ ու կես տարվա ընթացքում Ստա
 բայի ուսուցում հինգ ուսուցիչների քարտուղարներ են միոյս
 վել, ութ կազմաժինների վարիչներ, վեց ազիտմասա
 բաժինների վարիչներ, վեց կուլտուրոպրաժինների վարիչ
 ներ, վեց ՎՀ-ԲԳՏ հայտարարներ, յերկու կոմյերիտիտու
 թյան ուսուցիչի քարտուղար, չորս կին բաժնի վարիչ: Սոր
 հրդային սպարտի գծով փոխվել են — ուսուցործկոմի նա
 իարար — 6 անգամ, ուսուցիչների նախագահ — 5 անգամ,
 Լուսարժնի վարիչ — 5 անգամ, ժողատեսնակալ — 8 անգամ:
 Մյուս դեկաֆար դործիչները փոխվել են 5-7 անգամ: Այժմ
 հարց է արվում, ի՞նչ չափով են պատասխանատու այդ մար
 գիկ, վորոնք 7-8 անգամ փոխվում են (ձայն — մանավանդ
 յեթե սահմանային ուսուցիչ է): Ուղիղ է Համկոմկուտի (բ)
 Կենտկոմը պարտավորեցնում է անանձին ուշադրություն
 դարձնել սահմանային ուսուցիչներին:

Վերցնենք Շամխորի ուսուցիչ: 10 ամսվա ընթացքում ու
 յնում փոխել են — ուսուցիչի կազմաժյուրը յերկու անգամ,
 ազիտմասավարիչը — յերկու անգամ, կուլտուրոպրաժիչը —
 յերեք անգամ, ՎՀ-Բանդյուղտեսնությանը — յերկու անգամ,
 Լենկոմ յերիտմիության քարտուղարը — յերեք անգամ, ուսու
 գործկոմի նախագահը — յերկու անգամ, ժողատեսնավորը — 3
 անգամ, ուսուցիչներիտեղի յան նախագահը — 3 անգամ, ուսու
 սպառնողովի միության նախագահը — 3 անգամ, ուսուցիչ
 խորհը — յերկու անգամ, ՄՏ Կայանի դիրեկտորը — յե
 րեք անգամ, սովետի դիրեկտորը — յերկու անգամ, բողա
 միներման լիազորը — 2 անգամ: Այս բոլորը 10 ամսվա ըն
 թացքում: Նախկրայի — սահմանամերձ ուսուցիչ — Երկուս
 կոմում փոխվել են յերեք կազմաժյուր, յերեք ազիտմաս
 վար, յերեք կուլտուրոպրաժիչ, կին սեկտորի յերեք վարիչ:
 Իսկ գործիչների միջին կազմի (հրահանգիչներին և սեկտոր
 ների վարիչներին) հոսունությունն ուղղակի հաշվառել յե
 թարկել հնարովոր չե: Կոմյերիտ միության Երկուսի քար
 տուղարը փոխվել է յերկու անգամ, Ռայտործկոմի նախա
 գահը — 2 անգամ, Հողժողկոմը — 3 անգամ, Ֆինժող
 կոմը — 3 անգամ, Երկուսի յերեք նախագահը — յերեք,
 Մատակարարման ժողկոմ — 4, Հանրապետության դատա
 լիազ — 3, Երկ. ՎՀ և Բանդյուղտեսնության նախագահ — 2 ան
 գամ և այլն:

Նախիջևանի ուսուցիչում ուսուցիչի քարտուղարը — 7,
 ուսուցիչի կազմաժյուրը — 8, ազիտմասավարը — 5, ՎՀ և ԲԳ
 Տեսնության նախագահը — 6, կոմյերիտիտեթյան ուսուցիչի
 քարտուղարը — 5, ուսուցործկոմի նախագահը — 8, դատա
 լիազ — 2, ժողատեսնավորը — 3, ուսուցիչների նախագա
 հը — 3, ուսուցիչների վարիչը — 5 անգամ:

Նորաչենի ուսուցիչում ուսուցիչի քարտուղարը — 7, ուսուցի
 ժի կազմաժյուրը — 5, ազիտմասավարը — 5, կուլտուրոպրաժի
 — 4, կինսեկտորի վարիչը — 8, ուսուցործկոմի նախագահը —
 հինգ, կոմյերիտմիության ուսուցիչի քարտուղարը — 8, Ռայ
 ՎՀ-ԲԳՏ նախագահը — 4, ուսուցործկոմի նախագահի տեղա
 պահը և հողաժյուրը — 5, ժողատեսնավորը — 3, բազայի վարի
 չը — 4, ուսուցիչներիտեղի յան նախագահը — չորս անգամ:

Նույնպիսի հակադասական հոտերի լուծում է և Նախկին Որդուբազրի ուսյոնում :

Ո՞վ է դրանում մեղավոր : Իհարկե, մեղավոր է Ադրիոն կուսի (բ) Կենտկոմը : Ձի կարելի նշանակել այնպիսիներին, վորոնց պիտի համել մի ամսից հետո, վորոնք չեն ստորում իրենց սխալները վրա և դրանից համապատասխան յեղբակացու թյուններ չեն անում : Ինչպիսի աշխատանք կարող մ լինել մեղ մոտ ուսյոնում, յերբ վորպես կանոն ուսյոնի ջարտուղարը փոխվում է 7 անգամ, կազմբաժնարը — չորս անգամ և այլն : Յեվ վոր դիտարկում է, այդ մասին թուրք դիտեն, ուսյոն նշանակողը նախադու շարքս ուսյոն է մեկնում առանց ընտանիքի (ծիծաղ), մի քիչ նստում և չեմոդանների վրա և հետ է դառնում : Իրերի նման դրուեթյան մէջ չի կարելի խոսել կոլխոզների ամուսնական — քաղաքական ամուսնական, այն մասին, նրանց վրա դեկլարուեթյունն ստանդիլու մասին, այն մասին, վոր կոլխոզի մեջ կիցկիլեն մեք դասակարգային թշնամիները, վոր ընդհանրապես աշխատանքը դյուղում նորմալ կնխանա : Յեվ դրանում, կրկնում եմ, մեղավոր է վոչայնքան ուսյոնը, վորքան մեղավոր են մեք կենտրոնական կազմակերպուեթյունները, մասնավորապես Ժողկոմկոմը, վորը թուրքից քիչ և նայել դյուղին կարծելով, թե դյուղը նրան չի վերաբերում :

Բերեմ մի որինակ ևս, թե մեք սովխոզներում ինչպես է դրված մեք աշխատանքը :

Ահա կարա — Չարա սովխոզը . հսկայական սովխոզ է 9000 հեկտարով : Ինչպես և ամեն մի բամբակային սովխոզի, նրան ևս իբր թե մեծ ուշադրուեթյուն է դարձվել Ադրբ կոմկուսի (բ) Կենտկոմի կողմից : Այնտեղ գնացել են պատասխանատու ընկերներ, որինակ ընկ. Լեանիչին . Թիֆլիսից . այնտեղ է Թիֆլիսի կոմկոմի ջարտուղար ընկ. Ակոպովը, տարով նյութեր, վորոնց մասին յես խոսելու յեմ այժմ : Ինչպես է դրուեթյունն այնտեղ : Բամբակահավաքի ժամանակ կաշքանում սովխոզով անցել են 20.000 բանվոր : Բանուեթի հոտուեթյունը հակադասական է յեղել : Բանվորների արական եր դեպքում : Կոմյերիտուեթյան Ադրբեջանի Կենտկոմը վորոշել է սովխոզ ուղարկել 1600 կոմյերիտական : Հանդիլ է համապատասխան վորոշում : Իսկ քանիսն է գնացել : Մի

այն 262 (ծիծաղ) : Իսկ քանի՞ մն են մնացել : Միայն 21 հոգի (ծիծաղ) : Մնացածները վերադարձել են հենց հետևյալ ուրը : Ինչը յե նման այս : Կարելի՞ յե արդյոք, այդպես դաստիարակել կոմյերիտականներին, նրանց կարգապահուեթյուն սովորեցնել, յերբ Կոմյերիտուեթյան Կենտկոմի վորոշումը չի կատարվում :

Նման հոտուեթյան պատճառները շատ են . այստեղ և աշխատանքի դժվարուեթյուններ են, և մարաբիան, և կուլտուրենցարային պայմանները, և հենց դրա համար է, վոր անհրաժեշտ է ցուցադրել ավելի մեծ կազմակերպվածուեթյուն : Մինչդեռ սովխոզի դեկլարուեթյան անիուեթուեթյունը զգացվել է մինչև իսկ մանրունքներում : Ահա որինակ, ճրագը, հասարակ նավթի ճրագը, մինչդեռ դրա բացակայուեթյան չնորհիվ բարակներում կչոռոն սկսել է բամբակը կշռել ցերեկվա ժամը 4-ին, վորի հետևանքով 500 բանվոր թողել են աշխատանքը յերկու ժամ ստաջ : Իրա հետևանքով կորել է 1000 բանվորական ժամ : Իսկ միեւրոյն ժամանակ կենտրոնական խուտորի պահեստում ընկած են յեղել 45 լաստեր — «Չլիկ» : Վոչ վոք, ինչպես յերևում է, չի մտածել աշխատանքի շահերի մասին : Ելեքորական լուսավորուեթյուն է անց կացրված դիրեկցիայի և մի քանի այլ գործիչների ընտխարանները, իսկ 5-րդ խուտորի 10 բարակում չկա վոչ միայն ելեքորականուեթյուն, այլ մինչև իսկ հասարակ ճրագ :

Ահա անիուեթուեթյան մի որինակ ևս : Ադրսոցայն այդ սովխոզում ունի մի կայան, վորի վարին է վոմն Բեգնոսով, կուս . անդամ Բեգնոսովը մեկնել է Բաղու իր հետ վերցնելով սարահոլագրաման դրամարկի կնիքը և իր տեղը վոչ վոք չի թողել : Իրա համար էլ մի ամսվա ընթացքում բանվորներն արտոնյալ — դիտուել անուղ չեն, ստացել, յերեխաների համար նարստ չեն ստացել, թաղաման նարստ չեն ստացել և այլն : Նրա համար, վոր Բեգնոսովը ցանկացել է Բագու ընկալ կնիքով (ծիծաղ) և այնտեղ հիվանդանալ : Իսկ վարուեթյունը վոչ մի միջոց չի ձեռնարկել :

Կոմ թե ահա հասարակական անդի հարցը, կարելի՞ ըստույն հարց է, վորը պիտի գրավի վարուեթյան ուշադրուեթյունը : Իրոք սովխոզի դիրեկտորն ահա այս հսկայական մի քանի յերեկոց բաղկացած հրամանն է տվել (ծի

ծաղ) : Այս հրամանում ամենայն մանրամասնութեամբ մը շահված ե հասարակական անողի կարողը, այստեղ թվում ե, թե նախատեսված ե բոլորը, մինչև իսկ բանվորների աղբյուրին կազմի մենյուն : Վերջարանում սովխողի դիրեկտորն ստաջարկում ե իր տեղապահին ամեն որ ղեկուցել հրամանի կատարման ընթացքի մասին : Տեղապահն ել յեր կար չմասածելով, արձակել ե հետևյալ հրամանը (ծիծաղ, ծափահարութեան) : Հրամանում վորպես հիմարութեան գյուլս գործոց կա 47 անուն ճաշ (ծիծաղ) . այստեղ ե կարտոֆել ե անդլիական, ե տեֆտիլ հունական ե ինչ վոր հարկավոր ե : Այսպես, հրաման տրված ե, դիրեկտորը ե անդապահն ամեն որ ղեկուցում են իրար, իսկ գործնականում դրութեանն այնպես ե, վոր ճաշին աղ... չկա (ծիծաղ) : Բանվորների մեծ խմբեր յերբեմն մնացել են առանց ճաշի ե ընթերիբի : Բանջարեղեններ չկան, մինչդեռ յերկու վազոն կաղամբը փթել ե Հաջիկարուը կայարանում : Սմանեղենը կեղտոտ ե, մինչև իսկ դրանք լվանալու հար մարութեան չկա, սպասարկող անձնակազմը կեղտոտ հագուստում ե, սովխողն իր մթերքային քաղան չունի ե վոչ վոք ղեկավարներից չի խմացել, թե ինչ ճաշ ե լինելու վաղը : Սպասում են, վոր Բաղվից մթերքներ գան, ինչ կուղարկեն, այն ել լավ ե : Մի խոսքով, մի սոսկանք ե : Այդ բոլորը կատարվում ե նրա համար, վոր մարդիկ հրամաներ կազմելուց դենը չեն գնում, թղթային վալակիտայից, բենը՝ չեն անցնում, չեն կարողանում կոնկրետ, ոպերատիվ կերպով աշխատել, չեն կարողանում կենդանի գործ կազմակերպել :

Ո՞վ ե ղեկավարում այդ սովխողը : Ահա ղեկավար կադրերի ցուցակը — սովխողի դիրեկտորը — Կուրբակով — ուսու, կուսկոմի քարտուղարը — Վարդապետով — հայ, բանկոմի նախագահը — Խրամով — ուսու, դիրեկտորի ոգնականը՝ մատակարարման գծով — Ասլամագով — հայ ե այն : 13 մարդուց — վոչ մի թուրք, նույնիսկ ուսկոմի կին սեկտորը զլխավորել ե Ղարիրովան — հայուհի :

Բայց չե՞ վոր կարա — Չարան բացառապես թուրքական ուսու ե : Այստեղից ել հենց այն դժվարութեանները, վոր յեղել են թուրքական դյուղերից բանվորական ուժեր ժողո

